ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Արդարադատության նախարարության կողմից հրապարակվել է[1] «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերը:
Նախագծերով ակնկալվում է ներդնել բարեվարքության պարբերական ստուգման մեխանիզմներ դատավորների, դատախազների և քննիչների համար, ինչը, ըստ նախագծի հեղինակների, ապահովելու է այդ պաշտոնատար անձանց գործունեությունը պարբերաբար ուսումնասիրելու հնարավորություն՝ կոռուպցիոն երևույթներին ներգրավվածությունը բացահայտելու տեսանկյունից:

Ողջունում ենք և դրական ենք գնահատում բարեվարքության ինստիտուտի հետագա բարեփոխումները ու նախագծով առաջ քաշված նպատակների տեսլականը: Ճիշտ մշակելու և իրագործելու դեպքում, այս բարեփոխումը կարող է զգալի մշակութային և որակական փոփոխություններ բերել դատական, դատախազական և քննչական մարմիններում:

Միևնույն ժամանակ, առաջարկված նախագծում առկա են կարգավորումներ և մոտեցումներ, որոնք առաջացնում են մտահոգություններ բարեփոխումների արդյունավետ իրականացման համատեքստում:

Մասնավորապես, այլ պետությունների վեթինգի բարեփոխումների ուսումնասիրությունից պարզ է դառնում, թե որոնք են Հայաստանի և ընդհանրապես այլ պետությունների համատեքստում այս բարեփոխման ամենախոցելի կողմերը: Ուստի, առաջարկում ենք նախագծի լրամշակման ժամանակ ուշադրություն դարձնել հենց այս հարցերին.

- **Բարեվարքության ստուգման փուլերը և իրականացման համամասնությունը**

Օրինակ՝ Ալբանիայի վեթինգի ամենախոցելի կողմերից մեկն այն է, որ բարեվարքության գնահատումը իրականացվել է ըստ դատական ատյանների անմիջապես, օրինակ, նույն շրջանում դիտարկվել են Բարձրագույն դատարանի ամբողջ կազմը, որի արդյունքում դատարանի բոլոր դատավորները, բացի մեկից, ազատվել էին պաշտոնից: Արդյունքում, մի քանի տարով ընդհատվել էր Բարձրագույն դատարանի աշխատանքը և որպես արդյունք, դատարանը մեկ դատավորի կազմով ի վիճակի չէր եղել լսելու գործեր:

Օրենսդրական փոփոխությունների փաթեթով առաջարկվում է, որ բացառությամբ այն դատավորների, ովքեր դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում կամ առաջխաղացման ենթակա դատավորների ցուցակում ընդգրկվելիս անցել են բարեվարքության ուսումնասիրություն, ինչպես նաև եթե դատավորի կողմից պաշտոնը ստանձնելու պահին դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում կամ առաջխաղացման ենթակա դատավորների ցուցակում ընդգրկվելու համար բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկ

[1] https://www.e-draft.am/projects/5756

ներկայացնելու օրացուցային տարվանից անցել է չորս տարի, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկ[2]:

Այս իմաստով, կարևոր է, նախօրոք գնահատել բարեվարքության առաջին ստուգման ենթակա դատավորների թիվը՝ գնահատման և դրա արդյունքների հիման վրա դատական ատյաններում բացասական հետևանքները կառավարելու և նվազեցնելու նպատակով: Անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր դատական ատյանում կամ այլ պետական մարմիններում բարեվարքության ստուգումը կատարվի որոշակի փուլային տրամաբանությամբ և համամասնությամբ: Օրինակ՝ առաջին փուլով/տարում գնահատվի Վճռաբեկ դատարանի դատավորների 25 տոկոսի, Վերաքննիչ դատարանի դատավորների 35 տոկոսի և առաջին ատյանի դատարանների դատավորների 40 տոկոսի բարեվարքությունը: Այս դեպքում, եթե նույնիսկ մեծ թվով դատավորներ դուրս գան համակարգից, տվյալ ատյանների աշխատանքը չդադարեցվի: Նույնը վերաբերում է քննչական մարմիններին և դատախազությանը:

Հաշվի առնելով վերոգրյալ սկզբունքի կիրառումը՝ վերանայել և հիմնավորել բարեվարքության ստուգման գործընթացի ինտերվալները բոլոր մարմինների պաշտոնատար անձանց համար, ինչպես նաև բարեվարքության առաջին ուսումնասիրության իրականացման հստակ ժամկետները[3]:

- **Նոր կադրերի պատրաստում**

Որպեսզի բարեվարքության ստուգման արդյունքում առաջացած թափուր հաստիքները դիտարկվող երեք համակարգերում չառաջացնեն խնդիրներ համակարգի աշխատանքի արդունավետության տեսանկունից, կարևոր է ունենալ զուգահեռ ռազմավարություն նշված երեք համակարգերի համար խիստ չափանիշներով, ներառյալ՝ բարեվարքության ստուգում, և նորացված ուսումնական ծրագրով կադրեր պատրաստելու ուղղությամբ: Ուստի, առաջարկում ենք սույն նախագծի մշակմանը զուգահեռ երեք ոլորտների ղեկավարների հետ զուգահեռ ձեռնամուխ լինեն նոր կադրերի պատրաստման ռազմավարության մշակմանը:

- **Կարգապահական վարույթների արդյունավետություն և հաշվետվողականություն**

Այլ պետություններում իրականացվող/իրականացված վեթինգի փորձից պարզ է դառնում, որ այս բարեփոխման ամենակարևոր հենասյունը հենց վերջնական որոշում կայացնող մարմնի անկախությունն ու անաչառությունն է: Այլ պետություններում, որտեղ ընտրվել է խորքային վեթինգի մոդելը, հիմնականում այս լիազորությունը տրվել է օրենքով/իսկ որոշ դեպքերում նույնիսկ սահմանադրության հիման վրա ստեղծված մարմիններին: Եթե Հայաստանի դեպքում նման լիազորությունը տրվելու է երեք համակարգերում գործող կարգապահական հանձնաժողովներին, ապա այստեղ ակնհայտ է, որ օբյեկտիվության և անկախության լուրջ խնդիր կարող են առաջանալ՝ կորպորատիվ շահի պաշտպանությունից ելնելով, ինչպես նաև երեք համակարգերում էլ

---

[2] Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 2-4-րդ մասեր:

[3] Նույն նախագծի 5-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվում է, որ «սույն հոդվածով դատավորների վերաբերյալ բարեվարքության առաջին ուսումնասիրությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իրականացվում է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված ժամկետում», մինչդեռ ՀՀ դատական օրենսգրքի փոփոխությունների և լրացումների վերաբերյալ նախագծով որևէ ժամկետ սահմանված չէ:

կարգապահական վարույթների նախաձեռնման թափանցիկության և հանրային հաշվետվողականության խիստ սահմանափակվածությամբ պայմանավորված: Եթե այս ուղղությամբ լուրջ քայլեր չկատարվեն նույնիսկ ամենախիստ ու որակյալ բարեվարքության գնահատման դեպքում բարեփոխումը չի ծառայի իր նպատակին:

Ուստի, խիստ անհրաժեշտ է, որ բարեվարքության գնահատման կառուցակարգերի մշակման և ներդրմանը զուգահեռ օրենսդրական փոփոխություններ ձեռնարկվեն ինչպես դատական համակարգում, այնպես էլ քննչական մարմիններում և դատախազության համակարգում կարգապահական վարույթների արդյունավետության և հաշվետվողականության բարձրացման ուղղությամբ, ինչպես նաև օրենսդրական փոփոխություններով ապահովել բոլոր համակարգերի կարգապահական հանձնաժողովներում ներգրավված լինեն բավարար համամասնությամբ համակարգից դուրս անդամներ (ոչ դատավոր, ոչ դատախազ, ոչ քննիչ անդամներ), որոնք կառաջադրվեն հասարակական կազմակերպությունների կողմից: Կարևոր է նաև ամբողջությամբ վերանայել այս հանձնաժողովների ձևավորման սկզբունքները և կարգը, որպեսզի բացառվի ղեկավարության ուղիղ միջամտությունը և կորպորատիվ շահը դրա կողմից կայացվող որոշումներում:

Այս համատեքստում, անհրաժեշտ է փաստել, որ բարեվարքության ուսումնասիրության արդյունքներով կարող են բացահայտվել տվյալներ, որոնց առնչությամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունի նույն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Այս համատեքստում, անհրաժեշտ է դիտարկել բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության արդյունքների հիման վրա Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի լիազորությունը դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ:

- **Բողոքարկման արդյունավետությունը**

Տվյալ բարեփոխման հաջողության և արդյունավետության երաշխիքներից մեկը նաև արդյունավետ բողոքարկման մեխանիզմների առկայությունն է, հակառակ դեպքում կարող է հարվածի տակ դրվել ամբողջ գործընթացի օրինականությունն ու կայունությունը: Այսպես, պետք է նախատեսել երեք համակարգերում կարգապահական վարույթների արդյունքում կայացված որոշումների արդյունավետ բողոքարկման մեխանիզմներ՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի չափանիշներին համապատասխան:

- **Բարեվարքության ընթացիկ ստուգման արդյունքների հրապարակայնություն**

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում, որի նախագծի համաձայն՝ առաջարկվում է օրենքի 23-րդ հոդվածը լրացնել 7.1-ին կետով, որի համաձայն՝ «օրենքով նախատեսված դեպքերում և կարգով բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն իրականացնելը և բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ ներկայացնելը, որոնք ենթակա չեն հրապարակման.»:

Գտնում ենք, որ հանրային ծառայող հանդիսացող դատավորների, դատախազների, քննիչների պայմաններում կարևորվում է բարեվարքության ուսումնասիրության արդյունքների հրապարակայնության ապահովումը: Անկախ այն հանգամանքից, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության գնահատման վերաբերյալ տեղեկությունների հանրայնացումը կարող է միջամտել անձի մասնավոր կյանքի և անձնական կյանքի պաշտպանությանը, հրապարակայնության ապահովումն ունի էական նշանակություն ինչպես դատական իշխանության և իրավապահ համակարգի նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելու, ինչպես նաև գործընթացում ներգրավված մարմինների գործունեության

թափանցիկությունը, հաշվետվողականությունը և պատասխանատվությունը ապահովելու համատեքստում: Հաշվի առնելով հանրային պաշտոնի կարևորությունը, նրանք ենթակա են ավելի բարձր հրապարակայնության, քան այլ քաղաքացիները:

Հետևաբար, անհրաժեշտ է նախագծով ապահովել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրվող բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության հրապարակայնությունը: Քննարկման առարկա կարող է դառնալ դատավորի/դատախազի/քննիչի խիստ անձնական զգայուն հարցերին վերաբերող տեղեկությունների հրապարակայնության բացառումը:

- **Բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության շրջանակներում ենթակա տվյալներ**

Նախագծով անհրաժեշտ է հստակեցնել դատավորների, դատախազների, քննիչների բարեվարքության ընթացիկ ստուգման շրջանակներում գնահատման ենթակա տվյալները, քանի որ թեև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծով օրենքի 24-րդ հոդվածով նախատեսվում է լրացնել 21.1 այն մասին, որ այն «օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է դատավորների, դատախազների և քննիչների բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն և ներկայացնում բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ […]», սակայն նույն օրենքի 26.1-րդ հոդվածով նախատեսված բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության շրջանակներում հարցաթերթիկում լրացման ենթակա տվյալները վերաբերում են բացառապես նույն պաշտոնների **թեկնածուներին:**

Նույն նախագծով սահմանվում է, որ բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում լրացվելու է նաև թեկնածուի և նրա ընտանիքի՝ «վերջին հինգ տարում կուսակցական պատկանելության վերաբերյալ տեղեկություններ»: Կարևորելով դատաիրավական համակարգի՝ քաղաքական ազդեցություններից զերծ և անկախ լինելու պահանջները, անհրաժեշտ է ի լրումն կուսակցության անդամ հանդիսանալու վերաբերյալ տեղեկությունների վերլուծության դիտարկել նաև ինչպես թեկնածուի, այնպես էլ նրա ընտանիքի անդամների քաղաքականությամբ ակտիվ զբաղվելու վերաբերյալ տեղեկությունները ևս դառնան բարեվարքության շրջանակներում գնահատման հարց: Սա կարևորվում է այն հանգամանքով, որ ֆորմալ կուսակցության անդամ չհասդիսացող անձը ևս կարող է զբաղվել քաղաքականությամբ, ավելին լինել կոնկրետ քաղաքական կուսակցության գործունեությանը ակտիվ ներգրավված անձ՝ առանց կուսակցական անդամության տոմսի:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում գրանցված կուսակցությունների անդամների որևէ պաշտոնական ռեգիստր գոյություն չունի և պետական մարմինները տիրապետում են բացառապես կուսակցությունը գրանցելու համար անհրաժեշտ բավարար անդամների տվյալները, անհրաժեշտ է ներդնել անձի կուսակցական պատկանելությունը ստուգելու արդյունավետ կառուցակարգեր:

Քննչական կոմիտեի մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ լրացուցիչ առաջարկություններ

«Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածում նախատեսվում է իրականացնել լրացում 7.2 կետով, որի համաձայն՝ «Գրավոր և բանավոր քննություններից դրական գնահատական ստացած անձինք լրացնում են հարցաթերթիկ:

Քննություններից դրական գնահատական և հարցաթերթիկը լրացնելուց հետո դրական եզրակացություն ստացած հայտատուներն ընդգրկվում են քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում՝ որակավորման հանձնաժողովի որոշմամբ:

Գրավոր և բանավոր քննությունների անցկացման կարգը, հարցաթերթիկում ներառվող հարցերի շրջանակը և լրացման կարգը սահմանում է քննչական կոմիտեի նախագահը»:

Ոչ օրենքի նախագիծը, ոչ դրա հիմնավորումը որևէ կերպ չեն պարզաբանում, թե ինչ հարցաթերթիկ պետք է լրացնի ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը:

Հետևաբար, առաջարկում ենք օրենքով հստակեցնել քննությունից դրական գնահատական ստացած անձանց կողմից «հարցաթերթիկ» լրացնելու պահանջը, ի՞նչ տեղեկություններ է այն ներառելու, ի՞նչ նպատակի է ծառայելու և ինչպե՞ս է օգտագործվելու ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց առնչությամբ:

«Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում, որի համաձայն՝ «այն դեպքերում, երբ որակավորման հանձնաժողովը որոշում է կայացնում արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից ազատված անձին միաժամանակ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվելու վերաբերյալ» առաջարկվում է լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ. «Սույն դեպքում բարեվարքության ուսումնասիրություն չի իրականացվում»:

Հաշվի առնելով ինչպես Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն քաղաքականությամբ հանձնառությունը արդարադատության մարմիններում ապահովել բարեվարք կադրերի նշանակումը, անընդունելի ենք համարում, որ ՀՀ քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող որևէ անձ ազատված լինի բարեվարքության ուսումնասիրությունից: Սա հակասում է ինչպես ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականությանը, այնպես էլ ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026թթ. ռազմավարությանն ու գործողությունների ծրագրին:

Հետևաբար, առաջարկում ենք նախագծից հանել Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի լրացումը:

Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ

Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

Թրանսպարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ